# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 հոկտեմբերի 2018 թվականի N - 101 Ա**

### ԿԱՊԱՆԻ ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7-որոշմամբ հաստատված կարգի՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Բելառուսում կայացած «Սպիտակ Աշտարակ» միջազգային թատերական փառատոնում Հայ թատերական արվեստն ըստ արժանվույն ներկայացնելու համար ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի ներքոհիշյալ աշխատակիցներին.
   Կամո Արզումանյան - թատրոնի տնօրեն
   Գրիշա Մարգարյան - բեմադրիչ
   Արամ Հայրապետյան - դերասան
   Նարեկ Իսրաելյան - օպերատոր

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 8
ք. Կապան